

ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ՝ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



2025 (I-ին ԿԻՍԱՄՅԱԿ)

Քաղաքացիական գործերով իրավական դիրքորոշումներ

Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/27786/02/20 քաղաքացիական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Արդյո՞ք աշխատողին աշխատանքից ազատելու մասին անհատական իրավական ակտը ենթակա է անվավեր ճանաչման, եթե այն ընդունած մարմնի կողմից կատարված կատարված փոփոխություններով դրա գործողությունն արդեն դադարել է:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Իրավական ակտի հասցեատիրոջ պահանջով ակտն անվավեր ճանաչելը վերջինիս համար իրավական նշանակություն ունի այն դեպքում, երբ վիճարկվող ակտի կատարմամբ կամ կիրառմամբ խախտվել են կամ կարող են խախտվել նրա իրավունքներն ու օրինական շահերը: Նման իրավիճակ կարող է առկա լինել միայն գործող ակտի պարագայում: Դատարաններն աշխատողների իրավունքների պաշտպանությունը պետք է իրականացնեն ոչ թե գործողությունը դադարած անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելով, այլ պարզապես այդ իրավական ակտը չկիրառելով: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ի սկզբանե գոյություն չունեցող, իրավաբանական գործողությունը դադարեցված իրավական ակտն անվավեր ճանաչելու պահանջն առարկայազուրկ է, այսինքն՝ չի կարող վիճարկվել իրավական առումով գոյություն չունեցող ակտը: Դատարանը, առաջնորդվելով արդարադատության պատշաճ իրականացման և իրավական որոշակիության ապահովման նպատակով, դատաքննության ընթացքում ձգտում է ապացույցների ամբողջական, օբյեկտիվ և բազմակողմանի ուսումնասիրության արդյունքում կայացնել որոշում հայցի առարկայի՝ այսինքն՝ հայցվորի կողմից պատասխանողի դեմ ներկայացված պահանջի վերաբերյալ: Սակայն այդ իրավունքի իրացումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ կողմերի միջև առկա է չլուծված վեճ, որի վերաբերյալ դատարանը կարող է կայացնել որոշում, որն իրավական հետևանքներ կունենա և պարտադիր կլինի կողմերի համար: Դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը պետք է կողմերի համար ստեղծի հստակ իրավիճակ, որը վերջնականապես լուծում է նրանց միջև եղած վեճը և բացառում է նույն պահանջով նոր դատաքննության անհրաժեշտությունը: Եթե դատական գործը փաստացի առարկա չունի, և կողմերի միջև վեճը արդեն սպառված է, դատական պաշտպանության անհրաժեշտությունը վերանում է, քանի որ բացակայում է այն իրավական խնդիրն ու վեճը, որի շուրջ պետք է կայացվեր որոշում: Նշված վեճի սպառված լինելը կարող է արձանագրվել ինչպես գործի հարուցումից առաջ, այնպես էլ՝ դատաքննության ընթացքում՝ մինչև դատական ակտի կայացումը: Եթե որևէ հանգամանքի կամ իրավական ակտի փոփոխության արդյունքում վեճն ըստ էության լուծված է լինում, դատարանն այլևս իրավասու չէ շարունակելու վարույթը, և այդ պայմաններում գործը ենթակա է կարճման՝ դատարանի մատչելիության իրավունքը խախտված չհամարվելու պայմանով:

Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/52845/02/22 քաղաքացիական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման շրջանակներում որո՞նք են բարեխղճության պայմանի դրսևորման առանձնահատկությունները:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման համար գույքի տիրապետման բարեխղճությունն անհրաժեշտ նախապայման է: Բարեխղճությունը առկա է, երբ տիրապետողն ունի հիմնավոր համոզմունք, որ գույքը ձեռք է բերում օրինական հիմքով և այն տիրապետելու է որպես սեփականություն: Այս տիրապետումը պետք է իրականացվի առանց բռնության, հիմնված լինի այնպիսի փաստի վրա, որը կարող է տալ բավարար հիմք նման ենթադրության համար, և ուղեկցվի գույքի կառավարմամբ ու պահպանման նկատմամբ հոգածությամբ: Բարեխղճության առկայությունը կարևոր է հատկապես գույքի փաստացի տիրապետմանը անցնելու պահին: Սակայն որոշ դեպքերում հնարավոր է, որ բարեխղճությունը գոյություն չունենա հենց այդ պահին, բայց ծագի ավելի ուշ՝ տիրապետման ընթացքում: Բարեխղճության պայմանի դրսևորումը պայմանավորված է ինչպես անշարժ գույքի փաստացի տիրապետողի վերաբերմունքով տիրապետվող գույքի նկատմամբ, այնպես էլ գրանցված սեփականատիրոջ վարքագծով և վերաբերմունքով այլ անձի կողմից իր սեփականության տիրապետման նկատմամբ, այլ կերպ ասած՝ բարեխղճության պայմանը հիմնավորելիս պետք է կարևորել նախ՝ տիրապետողի համոզմունքը, որ գույքը ձեռք է բերվում օրինական հիմքերով, որը և պետք է հիմնված լինի այնպիսի փաստի վրա, որը տիրապետողին կարող է տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ գույքը տիրապետում է որպես սեփականություն, ապա նաև գույքի գրանցված սեփականատիրոջ վարքագիծն ու վերաբերմունքը թե՛ իր գույքի և թե՛ այդ գույքն այլ անձի կողմից տիրապետվելու առնչությամբ:

Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/36794/02/19 քաղաքացիական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Ամուսիններից մեկին անձնական սեփականության իրավունքով պատկանող գույքը (այսուհետ՝ «անձնական գույք») ամուսնության ընթացքում օտարելու արդյունքում ստացված դրամական միջոցների, ինչպես նաև այդ միջոցներով ամուսնության ընթացքում ձեռք բերված այլ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման առանձնահատկությունները:
 - **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ամուսնության ընթացքում անձնական գույքի օտարման և դրա հիմքով նոր գույքի ձեռքբերման դեպքում անձնական գույքը չի փոխակերպվում համատեղ սեփականության, եթե ամուսինները այդ մասին պայմանավորվածություն չունեն: Դատարանը նաև նշել է, որ անձնական գույքի ցանկացած փոխակերպումը չի փոխում սեփականության իրավունքի բնույթը, անձնական գույքի օտարումից ստացված դրամը և դրա հաշվին ձեռք բերված գույքը պահպանում են անձնական գույքի կարգավիճակը: Մինևույն ժամանակ դատարանը, պահպանելով ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքի համատեղ սեփականություն համարվելու կանխավարկածը, հայց ներկայացվելու դեպքում պարտավորվում է պարզել մի շարք հարցեր, օրինակ՝ ինչ միջոցներով և ինչ իրավական հիմքով է ձեռք բերվել գույքը, որի օտարումից ստացված միջոցներով նոր գույք է ձեռք բերվել, երբ և ինչ պայմաններով է այն օտարվել, նոր գույքի ձեռքբերման ժամանակը, ամուսինների միջև պայմանավորվածության առկայությունը: Նախորդիվ նշված հարցերի միջոցով դատարանը պետք է կողմնորոշվի գույքի համատեղ կամ անձնական լինելու հարցում: Հայց ներկայացրած կողմը պարտավորվում է ապացուցել անձնական գույքի օտարման փաստը, օտարումից ստացված դրամական միջոցների առկայությունը և այդ նույն դրամով նոր գույքի ձեռքբերման փաստը: Այդ փաստերի չապացուցման դեպքում գործում է համատեղ սեփականության կանխավարկածը, և հայցի առարկա հանդիսացող գույքը համարվում է ամուսինների համատեղ սեփականություն:
-

Վարչական գործերով իրավական դիրքորոշումներ

Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/1988/05/22 վարչական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Վճռաբեկ դատարանը հարկ է համարել քննարկել կառուցվող (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց) բազմաբնակարան շենքի, դրա բնակարանների, շինությունների կամ այլ տարածքների օտարումից ստացվող եկամուտների նկատմամբ ՀՀ հարկային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 147-րդ հոդվածի (նվազեցվող եկամուտները) 1-ին մասի 16-րդ կետի «բ» ենթակետի կիրառելիության առանձնահատկությունները:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** ՀՀ հարկային օրենսգրքի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումներից ամենևին չի բխում, որ անավարտ, կիսակառույց բնակարանի օտարումը կատարվում է տվյալ կառուցվող օբյեկտի նկատմամբ կառուցապատողի քաղաքաշինական փաստաթղթերով սահմանված իրավունքների և պարտականությունների օտարման եղանակով: Ցանկացած գույքի՝ որևէ եղանակով օտարման գործարքի համար առնվազն անհրաժեշտ է տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի առկայությունը, որպիսի կարգավորումն ամրագրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ և 176-րդ հոդվածներում, որոնցից հետևում է, որ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է այդ իրավունքի պետական գրանցման պահից: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն պարագայում, երբ կառուցապատողի և գնորդի միջև կնքված առուվաճառքի պայմանագրի գրանցման օբյեկտ են հանդիսանում կառուցվող շինության նկատմամբ կառուցապատողի քաղաքաշինական փաստաթղթերով սահմանված իրավունքներն ու պարտականությունները, այլ ոչ թե կառուցվող շենքում բնակարանի, շինության (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումը, ապա նման գործարքից ստացված եկամուտը Հարկային օրենսգրքի՝ 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի իմաստով հանդիսանում է հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտ, և վերջինիս համար չի առաջացնում եկամտային հարկի վճարման պարտականություն:

Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/5468/05/20 վարչական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Հայցվորի իրավական շահագրգռվածության հարցը՝ համայնքապատկան հողամասի նկատմամբ իրավունքների ձեռքբերման համատեքստում:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը պարզաբանում է, որ համայնքապետի՝ համայնքապատկան հողամաս օտարելու որոշումը կարող է վիճարկել այն անձը, ով որոշման ընդունման պահին՝ օրենքով նախատեսված հիմքով ունեցել է տվյալ հողամասի նկատմամբ իրավունք ձեռքբերելու լեգիտիմ ակնկալիք, կամ ում փաստական դրությունը թույլ է տվել ենթադրելու այդպիսի ակնկալիքի առկայությունը: Այսինքն՝ շահագրգիռ է համարվում այն սուբյեկտը, ում մոտ օբյեկտիվորեն կարող էր առաջանալ կասկած, որ հողամասի օտարումը խախտում է իր՝ այդ հողամասի նկատմամբ իրավական ակնկալիքը: Դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է պարզի՝ եղել է արդյոք հայցվորի մոտ մինչև որոշման ընդունումը լեգիտիմ ակնկալիք, և արդյոք օբյեկտիվորեն կարող էր ձևավորվել կասկած, որ այդ լեգիտիմ ակնկալիքը խախտվել է:

Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/5866/05/22 վարչական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Ի՞նչ ապացույցների համակցությամբ կարող է հաստատվել տրանսպորտային միջոցը ոչ սթափ վիճակում վարելու վարչական իրավախախտման փաստը:
 - **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելու ուղղությամբ անհրաժեշտ ու համարժեք միջոցներ ձեռնարկելու պարտականությունն օրենսդիրը դրել է վարչական մարմնի վրա, ուստի վերջինս է պարտավոր վարչական վարույթի եզրափակման և վարչական ակտ ընդունելու համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելու նպատակով ձեռնարկել անհրաժեշտ ու համարժեք միջոցներ՝ իր գործողությունները որևէ կերպ չպայմանավորելով անձի կողմից ապացուցման պարտականությունը չկատարելու հանգամանքով: Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոգրյալ իրավակարգավորումների ուժով տրանսպորտային միջոցը ոչ սթափ վիճակում վարելու վարչական իրավախախտման փաստի ապացուցման պարտականությունը (բեռը) ինչպես վարչական վարույթի, այնպես էլ ՀՀ վարչական դատարանում վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի քննության ընթացքում կրում է վարչական մարմնին, հետևաբար վերջինս պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ այդ փաստը հաստատող անհերքելի ապացույցներ ձեռք բերելու ուղղությամբ:
-

Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/1236/05/22 վարչական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** (1) Պարտավորեցման հայցի հիման վրա հարուցված գործերով կիրառելի օրենսդրությունը այն դեպքերում, երբ դատական ակտի կայացման պահին գործող օրենքները և այլ իրավական ակտերը վատթարացնում են անձի իրավական վիճակը՝ իրավահարաբերության ծագման պահին գործող օրենքների և այլ իրավական ակտերի համեմատ: (2) Ի՞նչ իրավական նախադրյալների, չափանիշների և պայմանների առկայության դեպքում Կառավարության նախագահը (ՀՀ վարչապետ) կարող է ունենալ հատուկ կենսաթոշակի իրավունք՝ տարբեր ժամանակահատվածներում գործող օրենսդրական կարգավորումների համատեքստում:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Պարտավորեցման հայցի քննության դեպքում, երբ մինչև դատական ակտի կայացումը կիրառելի օրենքները փոփոխվում են՝ վատթարացնելով անձի վիճակը՝ իրավահարաբերության ծագման պահին գործող օրենքների համեմատ, վարչական դատարանը պարտավոր է ղեկավարվել ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածով ամրագրված անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքին և այլ իրավական ակտերին հետադարձ ուժ հաղորդելու անթույլատրելիության կանոնով և կիրառել իրավահարաբերության ծագման պահին գործող՝ անձի համար առավել բարենպաստ օրենքները և այլ իրավական ակտերը: Նշված դիրքորոշումը նպատակ է հետապնդում անհրաժեշտ նախադրյալներ ստեղծել իրավական որոշակիության սկզբունքի ապահովման, օրենսդրության նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների պահպանման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման և մարդու իրավունքների երաշխավորման համար: ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ «(...)օրենսդիրը տարանջատել է «կենսաթոշակի իրավունք» և «կենսաթոշակ ստանալու իրավունք» հասկացությունները: Ընդ որում, դրանցից յուրաքանչյուրի ծագման համար նախատեսվել են տարբեր իրավաբանական փաստեր: Մասնավորապես՝ կենսաթոշակի իրավունքը ծագում է օրենքով նախատեսված որոշակի պայմանների առկայության դեպքում, իսկ կենսաթոշակ ստանալու իրավունքը՝ կենսաթոշակի իրավունքի առկայությամբ պայմանավորված՝ համապատասխան մարմին սահմանված կարգով դիմելու պարագայում(...)»: Համարելով, որ կենսաթոշակի իրավունքի ծագման պահին գործող կարգավորումը ավելի բարենպաստ է եղել, Վճռաբեկ դատարանը գտել է, որ պարտավորեցման հայցի շրջանակներում պետք է կիրառվեր հենց այդ կարգավորումը:

Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ5/0186/05/21 վարչական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Արդյո՞ք քրեական վարույթի ընթացքում անձի կողմից տրված ցուցմունքը կարող է որպես ապացույց ընդգրկվել վարչական վարույթում և դառնալ թույլատրելի ապացույց՝ քննվող գործով ապացուցման ենթակա հանգամանքները հաստատելու կամ հերքելու համար:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Օրենսդիրը հնարավոր է համարել վարչական վարույթից դուրս, մասնավորապես՝ քրեական վարույթում ձեռք բերված ապացույցի, այն է՝ քրեական վարույթ իրականացնող մարմինների կողմից տրամադրված տվյալների՝ որպես ապացույց ընդգրկելը հարկային հսկողություն իրականացնելու նպատակով հարուցված վարչական վարույթում: Դատարանն արձանագրել է, որ ապացույցների հետազոտման բազմակողմանիությունը ենթադրում է, որ գործում առկա ապացույցների ուսումնասիրության (ընկալման) ընթացքում դատարանը պետք է հաշվի առնի գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցների դատողությունն ու բացատրությունները՝ միաժամանակ իր իրավասության սահմաններում ձեռնարկելով բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ստացված փաստական տվյալների արժանահավատությունը ստուգելու համար: Ապացույցների հետազոտման լրիվությունը ենթադրում է գործով ներկայացված (ձեռք բերված) բոլոր վերաբերելի և թույլատրելի ապացույցների ընկալում ու ստուգում, փաստերի գոյության կամ բացակայության մասին վերջնական եզրահանգումներ կատարելու համար անհրաժեշտ և բավարար ամբողջ ապացուցողական նյութի վերլուծություն ու ստուգում: Ապացույցների հետազոտման օբյեկտիվությունը ենթադրում է, որ դատարանն ապացույցները հետազոտելիս որևէ կերպ չպետք է շահագրգռված լինի գործի ելքով և անկողմնակալ վերաբերմունք ցուցաբերի ապացույցների հետազոտման ընթացքում՝ ապահովելով կողմերի մրցակցությունն ու իրավահավասարությունը և զերծ մնալով գործի ելքի կամ այս կամ այն ապացույցի արժանահավատության վերաբերյալ նախնական դատողություններ կատարելուց: Դատարանները պատշաճ չեն գնահատել մինչդատական վարույթում վկայի տված ցուցմունքը որպես արժանահավատ ապացույց դիտարկելու կամ չդիտարկելու հարցը, մասնավորապես՝ վկայի ցուցմունքը՝ որպես ապացույցի ինքնուրույն տեսակ, վարչադատավարական կարգով կարող էր հետազոտվել այն դեպքում, եթե պահպանված լիներ վկա կանչելու, մասնավորապես՝ վկայի հրավիրման, վկայի ցուցմունք տալու ընթացակարգի՝ սուտ ցուցմունք տալու կամ ցուցմունք տալուց հրաժարվելու դեպքում առաջացող քրեական պատասխանատվության և ցուցմունքի հետազոտման վարչադատավարական կարգը:

Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ2/0071/05/23 վարչական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Արդյո՞ք անհատ ձեռնարկատերը ենթակա է վարչական պատասխանատվության որպես ֆիզիկական անձ, թե որպես պաշտոնատար անձ:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը նպատակահարմար է համարել զարգացնել «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի կիրառությունը՝ շեշտադրելով անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ վարչական պատասխանատվություն կիրառելու առանձնահատկությունները: Թեև Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 112.8 հոդվածով պատասխանատվության ենթակա են ֆիզիկական և պաշտոնատար անձինք, սակայն ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու դեպքում անհատ ձեռնարկատերն էլ է ենթակա վարչական պատասխանատվության: Ինչ վերաբերում է սանկցիայի ընտրությանը, դատարանը գտել է, որ անհատ ձեռնարկատերը նման գործունեություն իրականացնում է նույն կերպ, ինչպես կազմակերպության ղեկավար պաշտոնատար անձը, ուստի պետք է պատասխանատվության ենթարկվի կիրառելով նույն սանկցիան, ինչ պաշտոնատար անձի նկատմամբ: Դատարանը նաև նշել է, որ իրավակիրառ պրակտիկական պետք է զարգանա այն ուղղությամբ, որ երբ անհատ ձեռնարկատերը իր գործունեությունը կազմակերպում և կառավարում է ինչպես իրավասու ղեկավար, նրա նկատմամբ կիրառվի պատասխանատվություն պաշտոնատար անձի համար պատասխանատվություն սահմանող իրավանորմով, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով նա հատուկ ճանաչված է որպես ինքնուրույն սուբյեկտ:

Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/2769/05/22 վարչական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Վարչական հայց հարուցելու համար անհրաժեշտ իրավական շահագրգռվածության չափանիշները՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համատեքստում:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վարչական գործի հարուցման հարցում առանցքային նշանակություն ունի կատարված իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու խնդրանքով դիմած անձի շահագրգռվածության բացահայտումը: Ընդ որում՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի իրավակարգավորումների վերլուծությունից հետևում է, որ դատարան դիմելու իրավունքը բացարձակ չէ, այլ այն պատկանում է այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է դրանց խախտման վտանգ, այսինքն՝ դատարան դիմելու իրավունքը դիտարկվում է ոչ միայն որպես անձի սուբյեկտիվ իրավունքի արտահայտում, այլև՝ որպես վարչական արդարադատության արդյունավետության ապահովման միջոց: Իրավական շահագրգռվածությունը ենթադրում է, որ դատական պաշտպանության պետք է դիմեն միայն նրանք, ովքեր ունեն օբյեկտիվորեն հիմնավորված շահ: Այլ կերպ ասած՝ վարչական դատավարությունում «շահագրգռվածություն» եզրույթը կարելի է բնորոշել իբրև անձի իրական և փաստացի հետաքրքրվածություն՝ իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ու վերականգնման ուղղությամբ: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը կրկին ընդգծում է, որ «շահագրգիռ անձ» հասկացությունը գնահատողական հասկացություն է, և գործը քննող դատարանն իրավասու է գնահատելու այս հասկացությունը: Յուրաքանչյուր դեպքում դատական պաշտպանություն հայցած սուբյեկտի՝ «շահագրգիռ անձ» լինելը քննարկելիս դատարանը պետք է հանգամանալից անդրադառնա սուբյեկտային կազմի առկայությանը, այդ սուբյեկտի համապատասխան իրավունքներ և ազատություններ ունենալուն և ռեալ շահի առկայությանը, որը ենթակա է պաշտպանության կամ վերականգնման:

Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/13026/05/21 վարչական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Հարկադիր էլեկտրոնային աճուրդի արդյունքում կնքված առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու դեպքում լուսի վաճառքից ստացված գումարները վերադարձնելու պարտականության նկատմամբ ո՞ր օրենքն է կիրառելի:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Մինչև 08.01.2018 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-310-ն օրենքով կատարված փոփոխությունները գործող խմբագրությամբ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.3-րդ հոդվածով սահմանված հարկադիր էլեկտրոնային աճուրդը դատական կարգով անվավեր ճանաչվելու արդյունքում դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության դեպքում կիրառելի են համարվել գործարքի անվավերության վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանոնները, որոնց համաձայն՝ անվավեր ճանաչված գործարքի կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով իր ամբողջ ստացածը: Լուսի (գույքի) վաճառքից ստացված գումարները լուսի գնորդին վերադարձնելու պարտականությունն այն իրավական հետևանքն է, որն առաջանում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի արդյունքում կնքված առուվաճառքի պայմանագրի անվավեր ճանաչվելու դեպքում: Տվյալ պարտականության առաջացման վերաբերյալ համապատասխան կիրառելի իրավակարգավորման ընտրության համար անհրաժեշտ է բացահայտել իրավահարաբերության ծագման պահը, որն է՝ դատարանի կողմից կայացված դատական ակտով կողմերի միջև կնքված առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահը: Հետևապես՝ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված լուսի (գույքի) վաճառքից ստացված գումարները լուսի գնորդին վերադարձնելու վերաբերյալ կառուցակարգը կիրառելի է այն պարագայում, երբ առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ ավելի ուշ, քան «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի համապատասխան փոփոխության ուժի մեջ մտնելը:

Քրեական գործերով իրավական դիրքորոշումներ

ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/0535/13/22 քրեական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Արդյո՞ք օրինական ուժի մեջ մտած դատավճռի պայմաններում կարելի է կիրառել նոր քրեական օրենքը՝ հետադարձ ուժով, և եթե այո՝ ապա ինչ սահմաններում՝ առանց խաթարելու դատական ակտերի կայունության սկզբունքը:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը շեշտել է, որ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտերի դեպքում նոր քրեական օրենքը հետադարձ ուժ կարող է ունենալ միայն սահմանափակ դեպքերում՝ դատական ակտերի կայունության և որոշակիության սկզբունքները պահպանելու նպատակով: Մասնավորապես, քրեական օրենքը հետադարձ ուժ ունի, եթե վերացնում է արարքի հանցավորությունը (ամբողջությամբ կամ մասնակի), նշանակված պատիժը գերազանցում է նոր օրենքով սահմանված առավելագույն ժամկետը, նշանակված պատժատեսակը խստությամբ գերազանցում է նոր օրենքով սահմանված առավել խիստ պատժատեսակը: Դատարանը նաև պարզաբանել է, որ պատժի նշանակման հատուկ կանոնների կիրառության դեպքում (օրինակ՝ չավարտված հանցագործության, համաձայնեցման կամ արագացված վարույթի դեպքում) «ամենախիստ պատիժ» կամ «առավելագույն ժամկետ» հասկացությունները պետք է հաշվարկվեն այդ հատուկ կանոնների հիման վրա:

ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/0282/06/23 քրեական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Արդյո՞ք իրավաչափ է փախստականի կամ ապաստան հայցողի նկատմամբ կալանքի կիրառումը՝ հաշվի առնելով նրա հատուկ կարգավիճակը և քրեական գործով առաջադրված մեղադրանքների բնույթը (փաստաթղթերի կեղծում, սահմանի ապօրինի հատում):
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով փախստականի կարգավիճակ ունեցող անձանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հարցին, իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածով (փաստաթղթեր կեղծելը) և 469-րդ հոդվածով (պետական սահմանն ապօրինի հատելը) նախատեսված հանցանքների համատեքստում հատկապես ներգաղթային կալանքի և ապօրինի մուտքի կանխարգելման միջև սերտ կապի պահանջի պահպանման ստուգումը ստորադաս դատարանների համար առաջնային բնույթ պետք է կրի՝ ապահովելով այլընտրանքային խափանման միջոցների կիրառման լայն հնարավորությունը, եթե չկան հիմքեր ենթադրելու, որ նման այլընտրանքը կոնկրետ տվյալ դեպքում ոչ արդյունավետ կլինի: Փախստականի կարգավիճակ ունեցող կամ ապաստան հայցող անձի կալանավորումը պետք է լինի անհատականացված, համաչափ և անհրաժեշտ: Կալանավորումը պետք է ունենա հստակ և օրինական նպատակ, օրինակ՝ ինքնության հաստատում, փախուստի կանխում, ապաստանի դիմումի քննարկում կամ արտաքսման նախապատրաստում և այլն: Ուստի՝ փախստականի կարգավիճակ ունեցող անձի կալանավորումը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածով և 469-րդ հոդվածով նախատեսված հանցանքների համատեքստում, պետք է լինի բացառիկ միջոց և կիրառվի միայն խիստ անհրաժեշտության դեպքում, երբ այլ, ավելի մեղմ միջոցներն անարդյունավետ են:

ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/0416/01/21 քրեական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Կարո՞ղ է արդյոք հանցանքի ծանրության աստիճանի փոփոխման արդյունքում, երբ այն դասակարգվում է որպես միջին ծանրության, կիրառվել ավելի կարճ վաղեմության ժամկետ, երբ նոր օրենսգրքը այդ մասին հատուկ սահմանում չի տալիս:
 - **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Քրեական օրենքի հետադարձության կանոնների համաձայն՝ նախկին օրենքով ծանր հանցագործության համար նախատեսված քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետը համեմատելով նոր օրենքով միջին ծանրության հանցանքի համար սահմանված վաղեմության ժամկետի հետ, կարող ենք արձանագրել, որ թեև հանցանքի տեսակը մեղմացել է, սակայն վաղեմության ժամկետները մնացել են անփոփոխ: Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ տվյալ դեպքում անթույլատրելի է օրենքի փոփոխության արդյունքում հետադարձության կանոնների կիրառմամբ ստացված միջին ծանրության հանցանքի համար քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետը (տասը տարին) համեմատել ՀՀ նախկին քրեական օրենսգրքով նախատեսված միջին ծանրության հանցանքի համար քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետի (հինգ տարի) հետ: Հանցանքի ծանրության մեղմացումը ինքնին չի առաջացնում քրեական պատասխանատվությունից ազատելու նոր, ավելի կարճ վաղեմության ժամկետի կիրառման իրավունք, եթե օրենքով այդ ժամկետը հստակ չի փոփոխվել կամ վերանայվել:
-

ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՍԴ3/0003/01/13 քրեական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Հնարավոր է արդյոք բացառիկ վերանայման ընթացակարգով բեկանել օրինական ուժի մեջ մտած դատական ակտը՝ հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արձանագրված նյութաիրավական կամ քրեադատավարական խախտումները, երբ այդ խախտումները չեն վերաբերում գործով հաստատված փաստական հանգամանքներին և դրանց տրված քրեաիրավական գնահատականներին:
 - **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Անդրադառնալով բացառիկ վերանայման արդյունքով կայացվող դատական ակտերին և դրանց հրապարակմանը հաջորդող վարույթին, Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ Վարյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումների լույսի ներքո, այն դեպքերում, երբ Եվրոպական դատարանը գործով արձանագրել է նյութաիրավական և քրեադատավարական հայեցակետերի խախտումներ, որոնցով լրջորեն կասկածի տակ է դրվել ներպետական մարմինների կողմից իրականացվող քննության համապատասխանությունը, սակայն, միևնույն ժամանակ կասկածի տակ չի դրել ստորադաս դատարանների դատական ակտերով հաստատված՝ գործով դատապարտված անձանց հանցավոր արարքների հիմքում ընկած փաստական հանգամանքները, ինչպես նաև դատապարտյալների արարքներին տրված քրեաիրավական գնահատականները, կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բեկանումը և գործի կրկին քննությունը՝ որպես մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը վերականգնելու անհատական միջոց, չի նպաստի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կայունության և թույլ տրված հնարավոր դատական սխալների վերացման անհրաժեշտության միջև արդարացի հավասարակշռության ապահովմանը և չի կարող ծառայել «restitutio in integrum» հնարավորինս ապահովելու նպատակին, ավելին, կհակասի իրավական որոշակիության սկզբունքին:
-

Սահմանադրական դատարանի որոշումներ

ՍԴՈ-1776՝ ՀՀ ԱԺ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի սահմանադրականության հարցով

- **Քննության շրջանակը.** «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքը
 - **Սահմանադրական դատարանի դիրքորոշումը.** ՍԴ-ն օրենքի շրջանակներում ամրագրված սահմանափակումների համատեքստում քննարկել է սահմանափակումների նպատակների իրավաչափությունը, որի արդյունքում արձանագրել է, որ այդ նպատակները երկուսն են՝ 1. Կոռուպցիայի դեմ պայքարը և 2. Հանցավորության դեմ պայքարը: Ըստ այդմ, ՍԴ-ն առանձնացրել է այդ նպատակների շրջանակներում կատարվող գործողությունները և դրանց իրավաչափությունը: Երկու նպատակներն էլ համարվել են ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված համաչափության չափանիշները բավարարող: ՍԴ-ն նշել է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ օրենքը Սահմանադրության 73-րդ հոդվածի իմաստով հետադարձ ուժ չունի, քանի որ այն չի սահմանում նոր նյութական պարտականություններ, այլ կարգավորում է արդեն գոյություն ունեցող և օրենքի ընդունումից հետո շարունակվող իրավիճակների ընթացակարգը: Սահմանադրական դատարանը ուսումնասիրել է, թե արդյոք ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքով նախատեսված ուսումնասիրության որոշման անբողոքարկելի լինելը խախտում է Սահմանադրության 61-րդ հոդվածը: Դատարանը նշել է, որ ուսումնասիրությունն իր էությամբ հայցի նախապատրաստման փուլ է, երբ դատախազությունը հավաքում է ապացույցներ հնարավոր հայց ներկայացնելու համար: Այս փուլում ընդունված որոշումը ինքնին չի խախտում անձի իրավունքները, այլ միայն նախապատրաստում է հետագա դատավարությունը, որը կարող է ավարտվել հայցով կամ դրա հրաժարմամբ: Ինչ վերաբերում է ուսումնասիրության ժամկետների բացակայությանը, դատարանը նշել է, որ այս հարցը «չհասունացած» խնդիր է, քանի որ դատարանները դեռ չեն կիրառել և մեկնաբանել այդ դրույթը կոնկրետ գործերի շրջանակում, ուստի ՍԴ-ն այս գործով այն չի քննարկել: Սահմանադրական դատարանը նշել է, որ ապօրինի գույքի բռնագանձման մասին օրենքով գույքի բռնագանձման համար որևէ ժամանակային սահմանափակում չի սահմանվում՝ ոչ օրենքի ուժի մեջ մտնելուց առաջ ձեռք բերված, ոչ էլ դրանից հետո ձեռք բերված գույքի համար: Սա կարող է հանգեցնել երկարաժամկետ անորոշության, ուստի օրենսդիրը պետք է նախատեսի ողջամիտ վաղեմության ժամկետներ երկու դեպքերի համար օրենքի ուժի մեջ մտնելուց առաջ ձեռք բերված գույքի համար՝ սկսած ուժի մեջ մտնելու պահից, կամ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ձեռք բերված գույքի համար՝ սկսած գույքի ձեռքբերման կամ պաշտոնավարման ավարտի պահից: Դատարանը նաև պարզաբանել է, որ ուսումնասիրությունը կարող է սկսվել միայն այն պահից, երբ մինչդատական վարույթի օրինականության հսկող դատախազը համապատասխան տեղեկություն և փաստաթղթեր է փոխանցում իրավասու մարմնին, և այդ մարմինը 10-օրյա ժամկետում կայացնում է որոշում: Ինչ վերաբերում է փոխկապակցված անձանց լայն շրջանակին վերաբերող առարկությանը, ապա առանց կոնկրետ գործի փաստական հանգամանքների ՍԴ-ն դա չի համարել Սահմանադրությանը հակասող:
 - **Սահմանադրական դատարանի եզրակացությունը.** Սահմանադրական դատարանը գործի քննության արդյունքում որոշել է, որ դիմումատուին չի հիմնավորել վիճարկվող օրենքի ամբողջական հակասահմանադրականությունը: Օրենքի որոշ հոդվածների սահմանադրականության հարցը քննվել է բացառապես ներկայացված փաստարկների շրջանակում: Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օրենքով նախատեսված առանց մեղադրական դատավճռի բռնագանձման ինստիտուտը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ կա հանրային մեծ վտանգավորություն ունեցող արարք կամ դրա առկայության հիմնավոր կասկած, և երբ ապահովված է մարդու սեփականության իրավունքի համաչափ սահմանափակման նախադրյալը: Հակառակ պարագայում՝ գույքի բռնագանձումը քրեական վարույթից դուրս չի համապատասխանում Սահմանադրության պահանջներին, մասնավորապես՝ իրավունքի պաշտպանության և համաչափության սկզբունքներին:
-

ՄԴՈ-1789` ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի և 397-րդ հոդվածի 1-ին մասի և դրանց իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության` Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

- **Քննության շրջանակը.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածը և 397-րդ հոդվածի 1-ին մասը
- **Սահմանադրական Դատարանի դիրքորոշումը.** ՄԴ-ն արձանագրել է, որ վիճարկվող հիմնական իրավադրույթների, մասնավորապես՝ Օրենսգրքի 187-րդ հոդվածի կիրառման տեսանկյունից փաստացի տիրապետման իրավահաջորդություն հնարավոր չէ, քանի որ այն ոչ թե իրավունք է, այլ փաստ, իրավիճակ, որը որոշակի պայմանների համակցությամբ ձևավորում է իրավունքի ճանաչմանը հավակնելու հնարավորություն: Այսինքն՝ նշված հոդվածի տեսանկյունից առկա չէ պարտավորական կամ այլ իրավունք, որը կարող է զիջվել կամ փոխանցվել մասնակի իրավահաջորդության այլ եղանակով, ինչի արդյունքում ներկայացված ցեսիայի պայմանագիրը ձևական առումով կարող էր գնահատվել միայն դատավարական իմաստով իրավահաջորդության հիմք, սակայն նյութական-իրավական առումով իրավահաջորդություն առկա չէ:
- **ՄԴ-ի եզրակացությունը.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածը և 397-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում են Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ ձեռքբերման վաղեմության իրավահարաբերությունների դեպքում դատավարական իրավահաջորդության փաստով չեն կարող փոխանցվել փոխանցման պահին գոյություն չունեցող նյութական իրավունքները և պահանջները:

ՄԴՈ-1769` ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի` Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

- **Քննության շրջանակը.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը
- **Սահմանադրական դատարանի դիրքորոշումը.** ՄԴ-ն գտել է, որ հանրության գերակա շահի ապահովման նպատակով սեփականության օտարման վերաբերյալ գործով գույքի իրավատիրոջ սահմանադրական հիմնական իրավունքի խախտումը վկայող միջազգային դատարանի ակտի հիման վրա միջազգային դատարան չդիմաձայնեց այլ անձանց վերաբերող՝ նույն բնույթի գործերով օրինական ուժերի մեջ մտած դատական ակտերի վերանայման իրավահարաբերությունները չեն ընդգրկվում Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ հանդիսացող՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերջնականության (res iudicata) սկզբունքի տիրույթում: Սահմանադրական դատարանը փաստել է, որ երբ խոսքը վերաբերում է գույքի օտարմանը՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով, ապա միայն այն հանգամանքը, որ ՄԻԵԴ-ը մեկ անձի գործով արձանագրել է սեփականության իրավունքի խախտում, ինքնին հիմք չի կարող հանդիսանալ նույնաբնույթ այլ գործերով ընդունված, օրինական ուժ ստացած դատական ակտերի վերանայման համար, եթե տվյալ անձը՝ ինքն անձամբ չի դիմել ՄԻԵԴ, և ՄԻԵԴ-ի վճռի ընդունման պահին այլևս հնարավորություն չի ունեցել ՄԻԵԴ դիմելու՝ Եվրոպական կոնվենցիայով սահմանված ժամկետներին համապատասխան: Դատարանը միաժամանակ արձանագրել է, որ երբ ՄԻԵԴ-ի դատական ակտով ճանաչվել է այնպիսի սկզբունքի խախտում, որը կազմում է Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված սեփականության պաշտպանության երաշխիքների բովանդակությունը, ապա նույնաբովանդակ խախտումներից տուժած անձանց համար, ովքեր չեն դիմել ՄԻԵԴ կամ չեն հասցրել դիմել, իրենց գործերի վերանայման իրավունքի սահմանափակումը համարվում է անհամաչափ միջամտություն նրանց սեփականության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքներին: Այդպիսով՝ ՄԴ-ն հանգել է հետևության, որ եթե գոյություն ունի միջազգային դատական ակտ, որով ճանաչվել է հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման սահմանադրական սկզբունքներից որևէ մեկի խախտում, ապա նման խախտման մյուս հնարավոր զոհերն էլ պետք է ունենան իրավունքի վերականգնման գործուն հնարավորություն՝ այդ որոշումը դիտարկելով որպես նոր հանգամանք:
- **Սահմանադրական դատարանի եզրակացությունը.** Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող դատարանում գործին չմասնակցած անձի կողմից, որը նույն դատարանի վճռի կամ որոշման կայացման պահին չի ունեցել այդ դատարան դիմելու իրավունքը միջազգային պայմանագրով նախատեսված պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն, Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման որևէ սկզբունքի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող դատարանի կողմից խախտված ճանաչվելու դեպքում նոր հանգամանքով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված սահմանափակումը ճանաչվել է Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասին և 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

ՍԴՈ-1773՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

- **Քննության շրջանակը.** «Սնանկության Մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է. «Պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն պարտապանը, պարտատերը (պարտատերերը)»: Սահմանադրության 79-րդ հոդվածը սահմանում է իրավական ակտերի որոշակիության սկզբունքը, ըստ որի՝ «Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»:
- **Սահմանադրական դատարանի դիրքորոշումը.** Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի այնպիսի մեկնաբանումը, որի դեպքում կարող է բողոքարկվել պարտապանին սնանկ ճանաչելու մասին արդեն ուժի մեջ մտած դատական ակտը (նույնիսկ նոր հանգամանքների հիմքով) նաև այնպիսի պարտատիրոջ կողմից, ով ինքն անձամբ չի դիմել դատարան՝ պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով, հակասում է Սահմանադրության մի շարք կարևոր դրույթների: Այսպիսի մեկնաբանությունը խաթարում է սնանկության գործի կայունությունը և իրավական որոշակիությունը: Այն նաև ստեղծում է անորոշություն պարտապանի համար՝ թե ինչ հետևանքներ է ունենալու իր նկատմամբ կայացված որոշումը: Այս ամենը կարող է հանգեցնել պարտապանի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի և սեփականության իրավունքի խախտման: Միևնույն ժամանակ, դատարանը շեշտում է, որ այն պարտատերերը, ովքեր չեն ներկայացրել սնանկացման պահանջ, սնանկության վարույթի ընթացքում ունեն բավարար հնարավորություններ պաշտպանելու իրենց իրավունքները: Օրինակ՝ կարող են վիճարկել դիմող պարտատիրոջ պահանջի իրավաչափությունը: Դատարանի կարծիքով՝ իրավակիրառ մարմինները պետք է օրենքը մեկնաբանեն այնպես, որ նոր հանգամանքի հիմքով վճիռը կարողանան բողոքարկել միայն պարտապանն ու այն պարտատերը, ով դիմել է սնանկ ճանաչելու պահանջով: Հակառակ դեպքում կարող են առաջանալ լուրջ խոչընդոտներ՝ սնանկության վարույթի նպատակների իրագործման համար, օրինակ՝ պարտապանի ֆինանսական վերականգնումը և պարտատերերի պահանջների արդարացի բաշխումը: Սահմանադրական դատարանը նաև հիշեցնում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու որոշումը գործընթացի ավարտ չէ, այլ դրա մեկնարկային փուլն է: Սնանկության վարույթը շարունակվում է՝ ներառելով մի շարք դատական ակտեր և փուլեր, որոնք ապահովում են պարտապանի ու բոլոր պարտատերերի իրավունքների համաչափ պաշտպանությունը: Վերջում դատարանը ընդգծում է, որ ոչ բոլոր որոշումներն են նախատեսված բողոքարկման համար. միայն այն դատական ակտերը, որոնք կարող են էապես խոչընդոտել սնանկության գործի ընթացքը կամ մուտքը դատարան, համարվում են բողոքարկելի:
- **Սահմանադրական դատարանի եզրակացությունը.** «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն պարտապանը և հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտատերը (պարտատերերը):

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
